

ՀՀ կառավարության

2004 թվականի

-ի

N և որոշման

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՎԵՐԳԵՏՆՅԱ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ  
ԱՆՎՏԱՆԳ ԱՊԱԿԻՆԵՐԻ

### I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն տեխնիկական կանոնակարգը տարածվում է արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 7007 11 10, 7007 21 910 ծածկագրերին համապատասխան անվտանգ բազմաշերտ ապակիների և միսած ապակիների (այսուհետև՝ ապակիներ) վրա, որոնք օգտագործվում են բոլոր մակրոկլիմայական շրջաններում շահագործվող վերգետնյա տրանսպորտային միջոցների, տրակտորների, գյուղատնտեսական և բեռնամբարձիչ մեքենաների համար:

2. Սույն տեխնիկական կանոնակարգով սահմանվում են ապակիներին ներկայացվող տեխնիկական, ինչպես նաև դրանց մակնշնանը, փաթեթավորմանը ներկայացվող պահանջները և համապատասխանության հավաստման ընթացակարգերը:

3. Սույն տեխնիկական կանոնակարգը չի տարածվում նոտոցիկլետների և ավտոսահնակների վրա օգտագործվող ապակիների վրա:

4. Ապակիները ենթակա են համապատասխանության պարտադիր հավաստման:

### II. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Սույն տեխնիկական կանոնակարգում կիրառվում են հետևյալ հասկացությունները.  
Վերգետնյա տրանսպորտ՝ տրանսպորտ, որը ներառում է ավտոտրանսպորտի բոլոր տեսակները և գնացքների, մետրոյի վագոնները,  
ավտոտրանսպորտ՝ արագընթաց տրանսպորտ, որը ներառում է մարդատար, բեռնատար և բազմանպատակային մեքենաներ, ավտոբուսներ և տրոլեյբուսներ,  
մարդատար մեքենա՝ փոխադրամիջոց, որում նախատեսված են վարորդից բացի ուրիշ ոչ ավել տեղեր՝ ուղևորների փոխադրման համար,

**բազմաշերտ ապակի՝** արտադրատեսակ կազմված երկու և ավելի շերտերից, որոնք միմյանց միացված են մեկ կամ մի քանի միջանկյալ պլաստմասսե պատվածքի միջնաշերտերով,

**միսած ապակի՝** միաշերտ ապակի ենթարկված հատուկ ջերմամշակման՝ մեխանիկական հատկությունների բարձրացման և հարվածի դեպքում փշրումը ապահովելու համար,

կորածն ապակի՝ ապակի, որը կորացված է ոչ պակաս քան մեկ ուղղությամբ,

**հողմապակի՝** ապակի, որն օգտագործվում է տրանսպորտային միջոցների առաջնային որմնաբացվածքի ապակեպատման համար,

**հողմապակու սեգմենտի (բացահատի) բարձրություն՝** կորածն ապակու ներքին մակերևույթից մինչև ապակու եզրով անցնող հարթության միջև առավելագույն հեռավորություն,

**այլ ապակի՝** ապակի, որն օգտագործվում է տրանսպորտային միջոցների կողային և հետին որմնաբացվածքների ապակեպատման համար:

### **III. ՇՈՒԿԱ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ**

**6. Հայաստանի Հանրապետության տարածքում համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա ապակիների իրացումն առանց համապատասխանության հավաստման արգելվում է:**

**7. Հայաստանի Հանրապետության տարածքում համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա և շրջանառության մեջ գտնվող ապակիները պետք է ուղեկցվեն համապատասխանության նշանի մակնշմար, համապատասխանության սերտիֆիկատով կամ գրանցված համապատասխանության հայտարարություն:**

### **IV. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱՆՁՆԵՐԸ**

**8. Ապակիները պետք է արտադրվեն սույն տեխնիկական կանոնակարգի և արտադրողի կողմից հաստաված նորմատիվ և տեխնիկական (կոնստրուկտորական և տեխնոլոգիական) փաստաթղթերով սահմանված պահանջներին համապատասխան:**

**9. Ապակիների կոնստրուկտորական փաստաթղթերում պետք է տրված լինեն հետևյալ տվյալները.**

ա) պայմանական նշագիրը՝ սահմանված որոշակի տեսակի ապակիների նորմատիվ փաստաթղթերով.

բ) գույնը,

գ) չափերը՝ սահմանային շեղումներով,

դ) կորածն ապակիների համար ձևանմուշի և լայնական կորության նկատմամբ թույլատրելի անհարումը,

ե) հարթ ամրացված ապակիների համար հարթայնության շեղումները՝ միլիմետրերով,  
գ) ապակու եզրից այն հեռավորությունը, որի վրա թույլատրվում է սեղմակների և  
ցցածողերի հետքերը և դրանց չափը,

է) բաց և սահող կողերը,  
զ) իջեցվող և շարժական ապակիների կողերի մշակման եղանակը,  
թ) հողմապակու տեղադրման անկյունը, որը գտնվում է տրանսպորտային միջոցի  
լայնական առանցքով անցնող ուղղահայաց հարթությունում և ձևավորվում է հողմապակու  
վերին և ստորին եզրերով անցնող ուղղահայաց և ուղիղ գծով:

Ժ) հողմապակիների օպտիկական որակի ստուգման համար A, B և 1 գոտիների դիրքը  
և չափերը: Գոտիները նշագրում են տրանսպորտային միջոցներ արտադրող  
կազմակերպությունների կողմից տրված պահանջներին համապատասխան,

Ժա) հողմապակիների վրա մթնեցման շերտերի առկայության դեպքում՝ դրանց  
չափերը և բնութագրերը,

ԺԲ) շրջանակով և կիպարարով փակվող շերտերի լայնությունը,  
ԺԳ) մակնշման տեղը,  
ԺԴ) 70 %-ից պակաս լուսաթափանցելիությանը ապակիների համար  
լուսաթափանցման չափի և տեսակի մակնշումը:

**10. Ապակիների չափերը և դրանց սահմանային շեղումները պետք է**  
համապատասխանեն կոնստրուկտորական փաստաթղթերով սահմանված պահանջներին և  
չպետք է գերազանցեն 1-ին աղյուսակով և սույն տեխնիկական կանոնակարգի 11-րդ կետով  
սահմանված արժեքները:

## Աղյուսակ 1

| Ապակու տեսակը    | Մակերեսը, մ <sup>2</sup> , ոչ ավել | Հաստությունը, մմ |
|------------------|------------------------------------|------------------|
| Բազմաշերտ հարթ   | 2                                  | 4-7,5            |
| Բազմաշերտ կոր    | 2,5                                | 5-7,5            |
| Միսած ապակի հարթ | 2,3                                | 3-6              |
| Միսած լապակի կոր | 1,5                                |                  |

**11. Հարթ ապակիների չափերի սահմանային շեղումները չպետք է լինեն  $\pm 2,0$  մմ-ից  
ավելի:**

Ապակիների հաստության սահմանային շեղումները չպետք է գերազանցեն.

ա) բազմաշերտ ապակիներինը                            $\pm 0,4$  մմ

թ) ամրացված ապակիներինը                            $\pm 0,3$  մմ:

Միսած ապակիների հաստության շեղումները չպետք է գերազանցեն  $\pm 0,2$  մմ-ից:

**12. Էլեկտրագնացքների և ճերքին այրման շարժիչներով գնացքների ուղևորատար  
վագոնների ապակեպատման համար նախատեսված ապակիների չափերը և դրանց  
սահմանային շեղումները պետք է համապատասխանեն սույն տեխնիկական կանոնակարգի**

IX բաժնով սահմանված էլեկտրագնացքների և դիզել-գնացքների ուղևորատար վագոնների ապակիների ստանդարտով սահմանված նորմերին:

**13.** Հողմապակիները պետք է արտադրված լինեն 0,76 մմ հաստությամբ թաղանթով բազմաշերտ ապակուց: Մինչև 30 կմ/ժ արագությունը զարգացնող դանդաղընթաց տրանսպորտային միջոցների համար թույլատրվում է ամրացված ապակուց հողմապակու արտադրումը:

**14.** Սահմանված ձևից հարթ ապակիների և կորածն ապակիների հարթությունների շեղումները պետք է տրված լինեն որոշակի տեսակի ապակիների նորմատիվ և կոնստրուկտորական փաստաթղթերով:

**15.** Ապակիների բաց և սահուն կողերը պետք է լինեն հղկված, փակ անշարժները՝ բթացված:

Չի թույլատրվում ապակիների բաց կողերի վրա կոտրվածքներ:

Ապակիների սահող և անշարժ փակ կողերի վրա թույլատրելի կոտրվածքների (ջարդվածքների) չափերը և քանակը պետք է սահմանվեն որոշակի տեսակի ապակիների նորմատիվ փաստաթղթերով:

**16.** Ավտոտրանսպորտային միջոցների և տրամվայների հողմապակու լուսաթափանցելիությունը պետք է լինի 75 %-ից ոչ պակաս, առջևի դռների ապակիներին և առջևի կողային ապակիներին (առկայության դեպքում)՝ 70 %-ից ոչ պակաս, այլ ապակիներին՝ 60 %-ից ոչ պակաս:

Ապակեպատված կամ լուսանցքային տանիքի, մարդատար մեքենաների Բ գոտուց և այլ տրանսպորտային միջոցների համար 1-ին գոտուց մթնեցված շերտերից դուրս գտնվող սահմաններում լուսաթափանցելիությունը չի նորմավորվում:  
Հողմապակիների գոտիների որոշումը տրված է սույն տեխնիկական կանոնակարգի VIII բաժնում:

Զերմակլանող հողմապակիները չպետք է աղավաղեն սպիտակ, դեղին, կարմիր, կանաչ և կապույտ գույների ծիշտ ընկալումը:

**17.** Հողմապակիների օպտիկական աղավաղումները (Էկրանի վրա պրոյեկտված շրջականի տրամագծի փոփոխությունը) A և 1-ին գոտիներում չպետք է գերազանցեն  $\pm 2,5$  մմ (2) և B գոտում  $\pm 7$  մմ (6) արժեքները:

Հողմապակու եզրից 100 մմ հեռավորության վրա գտնվող A և 1-ին գոտիների բոլոր մասերի համար թույլատրվում է 123 մմ (25) երկրորդային պատկերի շեղում:

Վերգետնյա տրանսպորտային հողմապակիների համար ծայրամասային գոտու եզրից 25 մմ հեռավորության վրա, տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների հողմապակիների համար՝ 100 մմ հեռավորության վրա օպտիկական աղավաղումները և երկրորդային պատկերների շեղումները չեն նորմավորվում: Երկու կեսով հողմապակիների համար հարակից բաժանող կանգնակի նկատմամբ 35 մմ լայնակի շերտում օպտիկական ցուցանիշները չեն նորմավորվում:

**18.** Ապակիների թույլատրելի արատները պետք է սահմանված լինեն որոշակի տեսակի ապակիների նորմատիվ փաստաթղթով:

### **Բազմաշերտ ապակիներին ներկայացվող պահանջները**

**19.** Բազմաշերտ ապակաթերթերի թույլատրելի շեղվածությունը մեկը մյուսի նկատմամբ և սոսնձաթաղանթի ելքը պետք է սահմանված լինի որոշակի տեսակի ապակիների նորմատիվ փաստաթղթերով:

**20.** Հողմապակիները ( $40 \pm 2$ ) °C և մինուս ( $20 \pm 2$ ) °C ջերմաստիճաններում պետք է դիմանան ( $227 \pm 2$ ) գ զանգվածով գնդի հարվածին:

Գնդի ամկման բարձրության և հարվածի հակառի ուղղությամբ առանձնացված բեկորների զանգվածը պետք է համապատասխանի 2-րդ այսուակով սահմանված արժեքներին:

### Այլուսակ 2

| Ապակու հաստությունը, մմ         | Անկման բարձրությունը, մ, ${}^{+0,025}_{-0}$ , ջերմաստիճանում |        | Բեկորների զանգվածը, գ, ոչ ավել |
|---------------------------------|--------------------------------------------------------------|--------|--------------------------------|
|                                 | - 20 °C                                                      | +40 °C |                                |
| Մինչև 4,5 ներառյալ              | 8,5                                                          | 9,0    | 12                             |
| 4,5-ից բարձր մինչև 5,5 ներառյալ | 9,0                                                          | 10     | 15                             |
| 5,5-ից      »      6,5      »   | 9,5                                                          | 11     | 20                             |
| 6,5-ից      »                   | 10                                                           | 12     | 25                             |

Յուրաքանչյուր ջերմաստիճանում փորձարկման ենթարկված տաս նմուշից ութը չպետք է բաժանվեն առանձին մասերի և 8-ից ոչ պակաս գնդեր չպետք է անցնեն նմուշների միջով:

**21.** Հողմապակիները պետք է լինեն կայուն ( $4^{+0,025}_{-0}$ ) մ բարձրությունից, 82 մմ-ին մոտ տրամագծով, ( $2260 \pm 20$ ) գ զանգվածով գնդի հարվածով ծակատման նկատմամբ: Յարվածից հետո 5 վ-ում ապակու միջով չպետք է անցնի գունդը:

**22.** Հողմապակիները պետք է դիմանան ( $1,5^{+0}_{-0,005}$ ) մ բարձրությունից մանեկենի անկման հարվածին: Յարվածի ժամանակ պետք է ձևավորվի բազմակի շառավղային և շրջանաձև ճաքեր: Յարվածի կետից մինչև մոտակա շրջանաձև ճաքի հեռավորությունը պետք է լինի 80 մմ-ից ոչ ավել: Ապակու բեկորները չպետք է առանձնանան սոսնձաթաղանթից: հարվածի կետի կենտրոնում 60 մմ տրամագծով շրջանակում թույլատրվում է երկու կողմից ճաքեր մեկ կամ մի քանի 4 մմ-ից ոչ ավել լայնությամբ բեկորների առանձնացում:

Հարվածի կողմից միջանկյալ շերտը 20 սմ<sup>2</sup>-ից ավելի մակերեսով հատվածամասում չպետք է մերկանա: Թույլատրվում է 35 մմ երկարության միջանկյալ շերտի վրա ճեղքվածքների առաջացում:

**23.** Ապակիները, բացի հողմապակիներից, պետք է դիմանան (227±2) գ զանգվածով գնդի հարվածին: Գունդը չպետք է անցնի նմուշի միջով: Գնդի անկման բարձրությունը և հարվածի հակադիր ուղղությամբ առանձնացված բեկորների զանգվածը պետք է համապատասխանի 3-րդ առյուսակով սահմանված արժեքներին:

Մինչև 0,1 մ<sup>2</sup> մակերեսը ներառյալ և 300 մմ-ից պակաս լայնությամբ ապակիները մեխանիկական ամրության փորձարկումների չեն ենթարկվում:

### Այլուսակ 3

| Ապակու հաստությունը, մմ         | Գնդի անկման բարձրությունը, մ,<br>+0,025<br>0 | Բեկորների զանգվածը, գ, ոչ<br>ավել |
|---------------------------------|----------------------------------------------|-----------------------------------|
| Մինչև 5,5 մերառյալ              | 5,0                                          | 15                                |
| 5,5-ից բարձր մինչև 6,5 մերառյալ | 6,0                                          |                                   |
| 6,5-ից »                        | 7,0                                          |                                   |

**24.** Ապակիները, բացի հողմապակիներից պետք է դիմանան ( $1,5^{+0}_{-0,005}$ ) մ բարձրությունից մանեկենի անկման հարվածին: Հարվածի ժամանակ փորձարկվող նմուշը պետք է ճկվի և ճեղքվի առաջացնելով հարվածի կետի շուրջը կենտրոնացված բազմաքանակ ճաքեր: Թույլատրվում է թաղանթի կտրվածք, սակայն մանեկենի գլուխը չպետք է անցնի ապակու միջով: Չի թույլատրվում սոսնձաթաղանթից մեջ բեկորների առանձնացում:

Տաճապարհաշինարարական, գյուղատնտեսական մեքենաների և պաշտպանիչ էկրանների համար բազմաշերտ ապակիները մանեկենի հարվածի փորձարկումների չեն ենթարկվում:

**25.** Ապակիները պետք է լինեն լուսակայուն: Ապակիների ճառագայթումից հետո լուսանցումը պետք է լինի մինչև ճառագայթումը դրանց լուսանցման 95 %-ից ոչ պակաս և բոլոր դեպքերում ավտոտրանսպորտի հողմապակիների համար՝ 75 %-ից ոչ պակաս և այլ ապակիների համար՝ 70 %-ից ոչ պակաս: Այլ արատների առաջացում չի թույլատրվում:

**26.** Ապակիները պետք է լինեն խոնավակայուն: Խոնավակայունության փորձարկումներից հետո ապակիների նմուշների վրա չի թույլատրում բշտիկների առաջացում և նմուշներին ապակու շերտատում հատված եղրից 10 մմ-ից ավելի և հատվածից՝ 15 մմ-ից ավել հեռավորության վրա:

**27.** Ապակիները պետք է լինեն ջերմակայուն: Ջերմակայունության փորձարկումներից հետո ապակիների նմուշների վրա չի թույլատրվում բշտիկների առաջացում և նմուշների

չհատված եզրից 14 մմ-ից ավելի կամ հատվածից՝ 25 մմ-ից ավելի և փորձարկումների ժամանակ առաջացած ցանկացած ճաքից 10 մմ հեռավորության վրա ապակու շերտատում:

### **Միսած ապակիներին ներկայացվող պահանջները**

**28.** Միսած ապակիները պետք է լինեն մեխանիկակայուն և դիմանան 4-րդ առյուսակում տրված բարձրություններից ( $227 \pm 2$ ) գ զանգվածով պողպատյա գնդի հարվածին:

#### **Աղյուսակ 4**

| Գնդի անկման բարձրությունը, մ, $\begin{matrix} +0,025 \\ 0 \end{matrix}$ | Ապակու հաստությունը, մմ         |
|-------------------------------------------------------------------------|---------------------------------|
| 2,0                                                                     | Մինչև 3,5 ներառյալ              |
| 2,5                                                                     | 3,5-ից բարձր մինչև 5,5 ներառյալ |
| 3,0                                                                     | 5,5-ից »                        |

Փորձարկվող ապակիների վեց նմուշներից ոչ պակաս հինգը պետք է դիմանան գնդի հարվածին:

Մինչև  $0,1 \text{ m}^2$  մակերեսը ներառյալ և 300 մմ-ից պակաս լայնությամբ ապակիները մեխանիկական ամրության փորձարկումների չեն ենթարկվում:

**29.** Փորձարկումների ժամանակ ապակիների քայլայման բնույթը որոշող  $50 \times 50$  մմ չափով ցանկացած քառակուսիներում պետք է լինի 40-ից ոչ պակաս և 400 –ից (3 մմ-ից պակաս հաստության ապակիների համար՝ 450) ոչ ավել բեկորներ:

Չի թույլատրվում 3 սմ<sup>2</sup>-ից ավելի մակերեսով բեկորներ: Թույլատրվում է մի քանի բեկորներ երկարավուն ձևի, եթե դրանք չունեն սուր ծայրեր և պոկվել են ապակու եզրից՝ ստեղծելով  $45^\circ$  չգերազանցող անկյուն: Այդ դեպքում բեկորի երկարությունը չպետք է գերազանցի 75 մմ-ից և 60-ից մինչև 75 մմ երկարությամբ բեկորների քանակը չեն գերազանցում 5 հատից:

Դարվածի կետի շուրջ 75 մմ շառավղով շրջանակի, ինչպես նաև 20 մմ լայնությամբ եզրագծի գոտում քայլայման բնույթը չի նորմավորվում:

#### **Ապակիների մակնշումը**

**30.** Յուրաքանչյուր ապակու վրա դրոշմով պետք է լինեն մակնշված հետևյալ տվյալները.

ա) արտադրող կազմակերպության անվանումը և ապրանքային նշանը (առկայության դեպքում),

բ) ապակու տեսակը և տիպի պայմանական նշագիրը՝ սահմանված որոշակի ապակու նորմատիվ փաստաթղթերով,

գ) ապակիները, որոնց լուսաթափանցելիությունը 70 %-ից պակաս է լրացուցիչ պետք է լինի մակնշված «Y» նշանով,

դ) նորմատիվ փաստաթղթի նշագիրը կամ այդ փաստաթղթով նախատեսված պայմանական նշանը,

ե) ավտոտրանսպորտային միջոցների բազմաշերտ ապակիների համար՝ ապակու արտադրման տարին և ամիսը:

**31.** Ավտոտրանսպորտային միջոցների հողմապակու համար պետք է նշված լինի ապակու տեսակը: Ապակիների տեսակը և նշագիրը պետք է լինի սահմանված որոշակի տեսակի ապակիների նորմատիվ փաստաթղթերով:

**32.** Արտադրողի և պատվիրատուի միջև կնքված պայմանագրի հիման վրա, կամ որոշակի տեսակի ապակիների նորմատիվ փաստաթղթերով կարող են սահմանվել լրացուցիչ տվյալներ (թղթե պիտակների վրա համարը՝ ըստ կատալոգի, ապակու տեսակը և այլն):

**33.** Ապակիների փոխադրական տարայի (փաթեթի) վրա պետք է լինի փակցված պիտակ՝ հետևյալ բովանդակությամբ.

ա) արտադրող կազմակերպության անվանումը և ապրանքային նշանը (առկայության դեպքում),

բ) ապակու տիպի նշագիրը սահմանված որոշակի ապակու նորմատիվ փաստաթղթերով,

գ) չափերը և ապակու տեսակը,

դ) ապակիների քանակը փաթեթում՝ հատ,

ե) թողարկման թվականը,

զ) նորմատիվ փաստաթղթի նշագիրը կամ այդ փաստաթղթով սահմանված պայմանական նշանը,

է) փաթեթավորման թվականը:

**34.** Փոխադրման տարաների վրա մակնշումը պետք է իրականացվի IX բաժնով սահմանված ցանկում նախատեսված բեռների մակնշման ստանդարտի պահանջներին համապատասխան: Վարվելակարգային նշանները, լրացուցիչ և տեղեկատվական ցուցումները պետք է լինեն սահմանված որոշակի ապակիների նորմատիվ փաստաթղթերով:

### **Ապակիների փաթեթավորմանը ներկայացվող պահանջները**

**35.** Յուրաքանչյուր ապակի ծածկում են թղթով կամ այնպիսի նյութով, որը չունի քերծելու հատկություն:

**36.** Ապակիների ձևից և չափերից կախված դրանք պետք է դասավորվեն փոխադրական փաթեթում 12 հատից ոչ ավել: Փոխադրական փաթեթի ձևը և

փաթեթավորման համար անհրաժեշտ նյութերը պետք է լինեն սահմանված որոշակի ապակիների նորմատիվ փաստաթղթերով:

Փաթեթավորումից առաջ բազմաշերտ կորածն հողմապակիների եզրաշերտերը պետք է կողային մասերով լինեն սոսնձային թաղանթով եզրավորված:

**37.** Փոխադրական փաթեթները տեղադրում են բեռնարկերի մեջ:

Բազմահարկ բեռնարկերով փոխադրելու դեպքում դրանց մեջ պետք է նախատեսված լինեն հատուկ միջոցներ, որոնց օգնությամբ բացառվեն ապակիների փոխադրական փաթեթների տեղաշարժը:

**38.** Փոքր քանակությամբ ապակիների փոխադրումը կարելի է իրականացնել փայտյարկերով, լրացուցիչ դրանք ամրացնելով փաթեթավորման պողպատե ժապավենով՝ փոխադրման ժամանակ բացառելով ապակիների տեղաշարժը :

**39.** Ապակիների յուրաքանչյուր փոխադրման տարա կամ բեռնարկի պետք է ունենա ապրանքառուղեկից փաստաթուղթ, որի վրա պետք է նշված լինեն սույն տեխնիկական կանոնակարգի 33-րդ կետով սահմանված տվյալները:

Առևտրային կազմակերպությունների համար ապակիների արկղերում կամ բեռնարկերում պետք է լինի նախատեսված նաև հրահանգ դրանց փաթեթի բացման, ապակիների պահման և տեղադրման վերաբերյալ ցուցումներով:

## V. ՀԱՍՏԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

**40.** Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին ապակիների համապատասխանությունը հավաստելու համար արտադրողը, մատակարարը կամ նրա լիազոր ներկայացուցիչը պետք է ունենա Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 12-ի «Արտադրանքի կամ ծառայությունների համապատասխանության պարտադիր հավաստման համար կիրառվող սխեմաները և դրանց նույնականացման նշագրերը սահմանելու մասին» N 1170-Ն որոշմանբ սահմանված **1 հ, 2 հ, 3 հ կամ 4 հ** հայտարարագրման սխեմայով հավաստված՝ համապատասխանության հայտարարագիր կամ **2 ս, 3 ս, 4 ս, 5 ս** կամ **6 ս** սերտիֆիկացման սխեմայով հավաստված՝ համապատասխանության սերտիֆիկատ: Արտադրողը, մատակարարը կամ նրա լիազոր ներկայացուցիչը ապակիների և (կամ) դրանց փոխադրական տարաների և ապրանքառուղեկից փաստաթղթերի վրա կարող են նշել Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 9-ի «Համապատասխանության նշանի պատկերը, դրան ներկայացվող տեխնիկական պահանջները և կիրառման կարգը սահմանելու մասին» N 1281-Ն որոշմանբ սահմանված ձևի համապատասխանության նշան:

**41.** Սերտիֆիկացման մարմինը՝ փորձարկումներ կատարելու նպատակով ապակիների նմուշառումն իրականացնում է արտադրողի, մատակարարի կամ նրա լիազոր ներկայացուցչի մասնակցությամբ՝ տվյալ խմբաքանակը բնորոշող նվազագույն բավարար

քանակով՝ սույն տեխնիկական կանոնակարգի IX բաժնում տրված ստանդարտով սահմանված խմբաքանակից դրանց նմուշների ընտրանքին համապատասխան:

**42.** Ապակիների նույնականացման գործընթացում ստուգում են դրանց մակնշման համապատասխանությունն ապրանքառողեկից փաստաթղթերում տրված տեղեկատվությանը:

**43.** Հավատարմագրված փորձարկման լաբորատորիան փորձարկումները պետք է կատարի սույն տեխնիկական կանոնակարգի IX բաժնով սահմանված փորձարկման մեթոդներ սահմանող ստանդարտին համապատասխան:

**44.** Սերտիֆիկացման մարմինը հայտառուին համապատասխանության սերտիֆիկատ հանձնելու ժամանակ նրա հետ կնքում է համապատասխանության սերտիֆիկատի օգտագործման մասին պայմանագիր, եթե սերտիֆիկացումն իրականացվել է համապատասխանության հավաստման 2 ս, 3 ս, 4 ս կամ 5 ս սխեմայով:

Համապատասխանության հայտառագրի և համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետի ընտրությունը պետք է կատարվի ըստ համապատասխանության հավաստման իրականացված սխեմայի.

**2 հ կամ 2 ս սխեմայի դեպքում՝** 12 ամիս,

**3 ս սխեմայի դեպքում՝** 24 ամիս,

**3 հ, 4 ս կամ 5 ս սխեմայի դեպքում՝** 36 ամիս,

**1 հ, 4 հ կամ 6 ս սխեմայի դեպքում՝** գործողության ժամկետը սահմանվում է հաշվի առնելով ապակիների ծառայության ժամկետները, բայց 6 ամսից ոչ պակաս:

**45.** «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան սերտիֆիկացված ապակիների համապատասխանության հսկողությունն իրականացվում է համապատասխանության սերտիֆիկատի գործողության ընթացքում, առնվազն տարին մեկ անգամ՝ սույն տեխնիկական կանոնակարգի 44-րդ կետում նշված պայմանագրով սահմանված ժամկետներում:

**46.** Համապատասխանության հսկողության արդյունքների հիման վրա

«Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան սերտիֆիկացման մարմինն իրավունք ունի պահպանել իր կողմից տրված համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետը կամ համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը կասեցնել կամ դադարեցնել։ Համապատասխանության սերտիֆիկատի գործողության կասեցման և դադարեցման պայմանները սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 12-ի N 1170-Ն որոշմամբ։

Համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու դեպքում սերտիֆիկացման մարմինն այդ մասին տեղեկացնում է համապատասխանության սերտիֆիկատը տնօրինողին և գրավոր ծանուցում ստուգումներ իրականացնող իրավասու մարմիններին։

## VI. ԶԱՓՈԼՄԱՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

**47.** Ապակիների չափունմերի միասնականության ապահովումը պետք է իրականացնել «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:


## VII. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

**48.** Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին ապակիների համապատասխանության պետական վերահսկողությունը պետք է իրականացվի «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

## VIII. ՀՈՂՄԱՊԱԿԻՆԵՐԻ ԳՈՏԻՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Մարդատար ավտոմեքենաների հողմապակիների A և B գոտիների որոշումը

**49.** Ավտոտրանսպորտի հողմապակիների A և B գոտիները (1-ին գծապատկեր) որոշում են տրանսպորտային միջոցում դրանց տեղակայման անկյան դիրքով ( $V_1$  և  $V_2$  կետեր) վարորդի աչքի պայմանական դիրքին համեմատ:



Գծապատկեր 1

$V_1$  և  $V_2$  կետերը որոշում են  $R$  նստողի ստուգիչ կետում սկզբնակետի կոորդինատների ուղղանկյուն համակարգի համեմատ, որի  $x$ ,  $z$  առանցքների ուղղությունը համընկնում է

ավտոմեքենայի թափքի նախագծման ժամանակ կիրառվող կոորդինատների համակարգի առանցքների ուղղության հետ:

$V_1$  և  $V_2$  կետերի կոորդինատները նստոցի թիկնակի  $25^\circ$  թեքության ժամանակ որոշում են 2-րդ գծապատկերին և 5-րդ աղյուսակին համապատասխան:

### Աղյուսակ 5


| Կետը  | Կոորդինատները, մմ |    |     |
|-------|-------------------|----|-----|
|       | x                 | y  | z   |
| $V_1$ | 68                | -5 | 665 |
| $V_2$ | 68                | -5 | 589 |

Նստոցի թիկնակի թեքության  $25^\circ$ -ից տարբերվող անկյունների դեպքում  $V_1$  և  $V_2$  կետերի համար անհրաժեշտ է 6-րդ աղյուսակին համապատասխան x և z կոորդինատների համեմատ մտցնել ուղղումներ:

### Աղյուսակ 6

| Նստոցի թիկնակի թեքության<br>անկյունը | Կոորդինատները,<br>մմ |    | Նստոցի թիկնակի թեքության<br>անկյունը | Կոորդինատները,<br>մմ |    | Նստոցի թիկնակի թեքության<br>անկյունը | Կոորդինատները,<br>մմ |     |
|--------------------------------------|----------------------|----|--------------------------------------|----------------------|----|--------------------------------------|----------------------|-----|
|                                      | x                    | z  |                                      | x                    | z  |                                      | x                    | z   |
| $5^\circ$                            | -186                 | 28 | $17^\circ$                           | -71                  | 17 | $29^\circ$                           | 34                   | -11 |
| $6^\circ$                            | -176                 | 27 | $18^\circ$                           | -62                  | 15 | $30^\circ$                           | 43                   | -14 |
| $7^\circ$                            | -167                 | 27 | $19^\circ$                           | -53                  | 13 | $31^\circ$                           | 51                   | -17 |
| $8^\circ$                            | -157                 | 26 | $20^\circ$                           | -44                  | 11 | $32^\circ$                           | 59                   | -21 |
| $9^\circ$                            | -147                 | 26 | $21^\circ$                           | -35                  | 9  | $33^\circ$                           | 67                   | -24 |
| $10^\circ$                           | -137                 | 25 | $22^\circ$                           | -26                  | 7  | $34^\circ$                           | 76                   | -28 |
| $11^\circ$                           | -128                 | 24 | $23^\circ$                           | -17                  | 5  | $35^\circ$                           | 84                   | -31 |
| $12^\circ$                           | -118                 | 23 | $24^\circ$                           | -9                   | 2  | $36^\circ$                           | 92                   | -35 |
| $13^\circ$                           | -109                 | 22 | $25^\circ$                           | 0                    | 0  | $37^\circ$                           | 100                  | -39 |
| $14^\circ$                           | -99                  | 21 | $26^\circ$                           | 9                    | -3 | $38^\circ$                           | 107                  | -43 |
| $15^\circ$                           | -90                  | 20 | $27^\circ$                           | 17                   | -5 | $39^\circ$                           | 115                  | -47 |
| $16^\circ$                           | -81                  | 18 | $28^\circ$                           | 56                   | -8 | $40^\circ$                           | 123                  | -52 |

50. Հողմապակու A, B գոտիների դիրքերի որոշումն իրականացնում են 2-րդ գծապատկերին համապատասխան:



## Գծապատկեր 2

1) Ա գոտին որոշում են ապակու արտաքին մակերևույթի չափերը սահմանափակող չորս հարթություններով:


- ա)  $V_1$  և  $V_2$  կետերով  $13^\circ$  անկյունով դեպի ձախ անցնող  $P_1$  ուղղաձիգ հարթությունով,
  - բ)  $V_1$  և  $V_2$  կետերով  $20^\circ$  անկյունով դեպի աջ անցնող  $P_2$  ուղղաձիգ հարթությունով,
  - գ) ավտոմեքենայի միջին երկայնական հարթության ուղղահայաց և  $V_1$  կետով  $3^\circ$  անկյունով դեպի վերև անցնող  $P_3$  հարթությունով,
  - դ) ավտոմեքենայի միջին երկայնական հարթության ուղղահայաց և  $V_2$  կետով  $1^\circ$  անկյունով դեպի ներքև անցնող  $P_4$  հարթությունով:
- 2) Բ գոտին որոշում են եզրից ավելի քան 25 մմ հեռավորության վրա և արտաքին մակերևույթի չափերը սահմանափակող չորս հարթություններով:
- ա)  $V_1$  և  $V_2$  կետերով  $17^\circ$  անկյունով դեպի ձախ անցնող  $P_1'$  ուղղաձիգ հարթությունով,
  - բ)  $V_1'$  և  $V_2'$  կետերով  $17^\circ$  անկյունով դեպի աջ  $V_1$  և  $V_2$  սիմետրիկ ավտոմեքենայի միջին երկայնական հարթությանը համեմատ անցնող  $P_2'$  ուղղաձիգ հարթությունով,
  - գ) ավտոմեքենայի միջին երկայնական հարթության ուղղահայաց և  $V_1$  կետով  $7^\circ$  անկյունով դեպի վերև անցնող  $P_3'$  հարթությունով,
  - դ) ավտոմեքենայի միջին երկայնական հարթության ուղղահայաց և  $V_2$  կետով  $5^\circ$  անկյունով դեպի ներքև անցնող  $P_4'$  հարթությունով:

51. Բեռնատար ավտոմեքենաների, ավտոբուսների, տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների հողմապակիների 1-ին գոտու որոշումը

1) Հողմապակիների 1-ին գոտու դիրքի որոշումն իրականացնում են 3-րդ գծապատկերին համապատասխան և.

ա) տրանսպորտային միջոցի միջին երկայնական հարթությանը զուգահեռ ուղղաձիգ հարթությունով անցնող վարորդի նստոցի ստուգիչ  $R$  կետի վերևում 625 մմ բարձրության վրա գտնվող և դեկանիվի առանցքով անցնող  $O$  տեսադաշտի կետի հիման վրա,

բ)  $O$  տեսադաշտի կետով անցնող և տրանսպորտային միջոցի միջին երկայնական հարթությանն ուղղահայաց հորիզոնական ուղիղ գծի՝  $OQ$  ուղու հիման վրա:



Գծապատկեր 3

2) 1-ին գոտին որոշում են հողմապակու արտաքին մակերևույթի չափերը սահմանափակող չորս հարթությունով.


ա) Օ կետով և տրանսպորտային միջոցի միջին երկայնական հարթությունից  $15^{\circ}$  անկյունով դեպի ձախ անցնող  $P_1$  ուղղաձիգ հարթությունով,

բ)  $P_1$ -ին սիմետրիկ և տրանսպորտային միջոցի միջին երկայնական հարթությունից աջ գտնվող  $P_2$  ուղղաձիգ հարթությունով,

գ)  $OQ$ -ին ուղիղ և հորիզոնական հարթության  $10^{\circ}$  անկյունով դեպի ներքև անցնող  $P_3$  հարթությունով,

դ)  $OQ$ -ին ուղիղ և հորիզոնական հարթության  $8^{\circ}$  անկյունով դեպի վերև անցնող  $P_4$  հարթությունով:

Սույն տեխնիկական կանոնակարգի 4-րդ գծապատկերին համապատասխան հողմապակու թեքության անկյունը և վարորդի նստոցի թիկնակի թեքության անկյունը մարդատար ավտոմեքենաների համար տրանսպորտային միջոցում հողմապակու վերին եզրի միջին մասի համեմատ  $P$  ( $A$ ,  $B$ ,  $C$ ) կետի կոորդինատները նշում են ավտոտրանսպորտի հողմապակիների գծագրերում:



Գծապատկեր 4

Թույլատրվում է տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների համար 1-ին գոտու դիրքն ընդունվել հողմապակու ամբողջ մակերևությը՝ բացառությամբ 100 մմ լայնությամբ ծայրամասային գոտուց:

#### IX. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՎ ՍԱՐՍԱՎԱԾ ՊԱՐԱՆՁՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԱՊԱՐՈՎՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՑԱՆԿԸ

| Ստանդարտի նշագիրը             | Պահանջներ և փորձարկման մեթոդներ սահմանող ստանդարտի անվանումը                                                                                    |
|-------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| ԳՕՍ 5727<br>3-րդ և 4-րդ բաժին | Ապակիներ անվտանգ վերգետնյա տրանսպորտային միջոցների համար.<br>Ընդհանուր տեխնիկական պայմաններ                                                     |
| ԳՕՍ 13521                     | Ապակիներ էլեկտրագնացքների և դիզել-գնացքների ուղևորատար վագոնների.<br>Դիմական չափեր և տեխնիկական պահանջներ                                       |
| ԳՕՍ 14192                     | Մակնշում բեռների                                                                                                                                |
| ԳՕՍ 27902                     | Ապակի անվտանգ ավտոմեքենաների, տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների համար. Օպտիկական հատկությունների որոշում                                 |
| ԳՕՍ 27903                     | Ապակի անվտանգ ավտոմեքենաների, տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների համար. Մեխանիկական հատկությունների որոշում                               |
| ԳՕՍ 27904                     | Ապակի անվտանգ ավտոմեքենաների, տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների համար. Լուսակայունության, ջերմակայունության և խոնավակայունության որոշում |